

«Հաստատումեմ»

«Նատալի ֆարմ» ՍՊԸ «Աստղիկ» Բժշկական Կենտրոնի

գլխավոր տնօրեն

Ասատուր Սարգսի Ասատրյան

03.10. 2025թ.



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԺԴ. 00.19 «Աչքի հիվանդություններ» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լ.Վ. Կամբուլյանի «Կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը իմունային ուվեիտների պաթոգենեզում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը

Կոմպլեմենտի համակարգը լինելով բազմաթիվ իմունոլոգիական և բորբոքային հիվանդությունների էթիոպաթոգենեզի մասնակից, դեր ունի նաև մի շարք ակնային հիվանդությունների պաթոգենեզում: Գրականության մեջ առկա են որոշ հետազոտություններ՝ կապված ուվեիտների էթիոպաթոգենեզում կոմպլեմենտի համակարգի մասնակցության հետ: Կան մի շարք հետազոտություններ՝ կատարված փորձարարական աուտոիմուն ուվեիտների մոդելների վրա, և սակավաթիվ են հետազոտությունները՝ իրականացված հենց ակնային հեղուկի ուսումնասիրության վերաբերյալ: Նման հետազոտությունների բացակայությունը հեղինակին դրդել է անցկացնել հետազոտություն կապված կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների մասնակցության բացահայտման հետ ուվեիտների էթիոպաթոգենեզում: Այսպիսով, իմունային ուվեիտների էթիոպաթոգենեզի իմունաբանական ավելի խորը ուսումնասիրությունն արդիական է և գրեթե չուսումնասիրված:

Գիտական նորույթը

Հեղինակի կողմից առաջին անգամ առաջարկվել է հաշվի առնել կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը՝ որպես իմունային ուվեիտների էթիոպաթոգենետիկ օղակ՝ հիմնվելով ակնային հեղուկում դեպքերի և հսկիչ խմբի միջև հայտնաբերված վիճակագրորեն հավաստի տարբերության վրա: Հետազոտության արդյունքում ստացվել է հստակ կոռելյացիոն կապ բորբոքման արտահայտվածության և ակնային հեղուկում C3, C4 գործոնների քանակական գրադիենտի միջև, իսկ արյան մեջ այդ կոռելյացիոն կապը թույլ է: Ակնային հեղուկում C3 և C4 ֆրակցիաները, ինչպես նաև C3/C4 հարաբերակցությունը, ցուցաբերել են առավել բարձր ցուցանիշներ HLA B27 զենի հետ ասոցացված ուվեիտի ենթախմբում, ապա նաև Բեխտետի հիվանդության, իդիոպաթիկ առաջային ուվեիտի և հերպետիկ ուվեիտի դեպքում: Ֆուքսի ուվեալ համախտանիշի դեպքում C3 ֆրակցիայի ցուցանիշները զրոյական են եղել, մինչդեռ C4-ի դեպքում գրանցվել են ավելի բարձր ցուցանիշներ: Հետևապես կարող ենք փաստել, որ Ֆուքսի ուվեալ համախտանիշի դեպքում ակնային հեղուկում C4-ն ունի դերակատարում:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը

Աշխատանքն ունի կարևոր գիտագործնական նշանակություն: Հեղինակն առաջարկում է իմունային ուվեիտների էթիոպաթոգենեզում հաշվի առնել նաև կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը՝ որպես տեղային ակնային իմունիտետի մի մաս:

Հետաքրքրական և արդիական է ուվեիտների տարբերակիչ ախտորոշում իրականացնելու դեպքում կիրառել ակնային հեղուկում C3 և C4 ֆրակցիաների սահմանային արժեքները: Որպես ախտորոշիչ թեստ կիրառելու դեպքում ուվեիտ ախտորոշում դնելու համար կիրառելի է ակնային հեղուկում C3-ի 0,005 գ/լ և ավելի, իսկ C4-ի՝ 0,000825 գ/լ և ավելի ցուցանիշները, որոնք ունեն համապատասխանաբար 76% և 82,8% զգայունություն և 100% սպեցիֆիկություն:

Առաջարկվում է հետազայում մշակել և ներդնել բուժման նոր, արդիական և թիրախային ուղիներ՝ կախված իմունային ուվեիտների դեպքում կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների ընդգրկվածությունից:

Ատենախոսության և սեղմագրի բովանդակության գնահատում

Ներկայացված ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է գործող չափանիշներին և պահանջներին ինչպես ծավալի, այնպես էլ կառուցվածքի տեսանկյունից: Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդաբանությունը հիմնված է ժամանակակից մոտեցումների վրա և ապահովում է ստացված արդյունքների օբյեկտիվությունը: Վերջիններս մշակվել են համապատասխան վիճակագրական մեթոդներով, ինչը բարձրացնում է վերլուծության արժանահավատությունը: Աշխատանքում ընդգրկված կլինիկական տվյալները, ինչպես նաև համապատասխան աղյուսակները, գրաֆիկները և կլինիկական նկարները նպաստում են հետազոտության լիարժեք ներկայացմանը: Ատենախոսության հիմնական գիտական դրույթները և եզրակացությունները հստակ ու հիմնավորված են, տրամաբանական հաջորդականությամբ բխում են կատարված հետազոտությունների արդյունքներից:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են սեղմագրում:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումների բնութագիրը

Ատենախոսության հիմնական դրույթները տեղ են գտել միջազգային և տեղական գիտաժողովներում և ամսագրերում՝ 4 տպագիր աշխատանքներում և բանավոր զեկույցներում: Ամսագրերի հիմնական մասը ներառված են ԲՈԿ-ի կողմից առաջադրված՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչման հայցորդների ատենախոսությունների հիմնական արդյունքների հրատարակման

համար առաջարկվող ամսագրերի ցուցակում: Մեկ հոդված տպագրվել է 1-ից ավել ազդեցության գործակից ունեցող (Impact factor) ամսագրերում և ցիտվել է այլ հեղինակների կողմից: Հրապարակումներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության աշխատանքի բովանդակությունը:

Քննադատական դիտողություններ

Աշխատանքին տրվող բարձր գնահատականի հետ մեկտեղ, հարկ է արձանագրել առանձին ոճական բացթողումներ, որոնք որևէ կերպ չեն նվազեցնում դրա գիտական արժեքն ու ամբողջականությունը:

Եզրակացություն

Լուսինե Վիտալիի Կամբուլյանի «Կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը իմունային ուվեիտների պաթոգենեզում» թեմայով ատենախոսությունը՝ ներկայացված ԺԴ. 00.19 «Աչքի հիվանդություններ» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչումի հայցմանը, ավարտուն աշխատանք է, հեղինակի կողմից կատարված է բավարար գիտական մակարդակով, շարադրված է զրազետ, իսկ ներկայացման ոճն ապացուցողական է: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է արդիական թեմայով կատարված ավարտուն գիտահետազոտական աշխատանք, որն իր գիտական նորույթով և գործնական առաջարկներով լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է հայցվող բժշկական գիտությունների թեկնածուի կոչմանը:


Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել «Աստղիկ» ԲԿ 01.10.2025թ.-ի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 19): Նիստը նախագահում էր կենտրոնի վիրաբուժության գծով փոխտնօրեն պրոֆ. Հ.Ա. Բարսեղյանը, ներկա էին ընդհանուր վիրաբուժության ամբիոնի դոցենտներ Ռ.Մ. Կուրդինյանը, Հ.Վ. Հարությունյանը, էնդոկրին վիրաբուժության ամբիոնի

վարիչ, դոցենտ Ա.Մ.Վարժապետյանը, կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆ.Ա.Մ. Աղավելյանը, լապարասկոպիկ վիրաբուժության ամբիոնի դոցենտներ Ա.Ա.Ոսկանյանը, Վ.Ռ.Բորոգանը, Կ.Հ.Դալսկյանը, օրթոպեդիայի և տրավմատոլոգիայի բաժնի ավագ մասնագետ, Բ.գ.թ. Ռ.Ս.Գալստյանը, LOR- ամբիոնի դոցենտներ Ն.Ռ.Նահապետյանը, Հ.Բ.Մեսրոպյանը, ռադիոլոգիայի ամբիոնի դոցենտ Ռ.Հ.Խոնդկարյանը, սրտաբանության ամբիոնի դոցենտ Յու.Ս.Մակարյանը, գինեկոլոգիայի ամբիոնի դոցենտ Ա.Ս.Խաչատրյանը, աչքի հիվանդություններ բաժանմունքի ծառայության ղեկավար Թ.Ա.Հովհաննիսյանը, բաժանմունքի վարիչ Տ.Մ.Շահինյանը և խորհրդի ևս 6 մասնակիցներ:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ «Աստղիկ» Բժշկական Կենտրոնի

«Աչքի հիվանդություններ» բաժանմունքի


ծառայության ղեկավար՝



Բ.գ.թ. Թ.Ա.Հովհաննիսյան

«Նատալի ֆարմ» ՍՊԸ «Աստղիկ» Բժշկական Կենտրոնի

խորհրդի նախագահ՝



պրոֆ. Հ.Ա.Բարսեղյան

Խորհրդի քարտուղար՝



դոցենտ Հ.Վ.Հարությունյան

Պեղիբաճանքները պետք է պահպանվեն և պահպանվեն
ՎՊԿ քաղաքի ղեկավար ի. Եսեկյան

